Եւ նոցա առեալ ընդ իւրեանս զոմանս յուխտաւորաց խոսեցան ընդ Մարտիրոսի վասն այսր բանի՝ և նա յօժարութեամբ անտացեալ աղաչանաց նոցա, եկն առ Եղիազար, և միջնորդ լեալ աղերսէր զնա ձեռնադրել զնուիրեալսն։ Եւ Եղիազար ասէ. արարից ըստ բանի քում, եւ կատարեցից անյապաղ զխնդիր քոյ։ Ձեռնադրեալ ապա Եղիազարու հանդիսիւ զնուիրեալսն յԵպիսկոպոսութիւն՝ արար խնճոյս մեծ, և 'ի սեղանի անդ յանդիման բազմութեան ասէ ցՄարտիրոս վարդապետ. ո՞չ դու այն էիր՝ որ ցայսքան ժամանակ այսչափ վրդովմունս յարուցեր՝ կենօք և մահու չափ ընդդէմ զինելով ինձ, եւ հնարս դործէիր խափանել զգործ Կաթուղիկոսութեանս. քարոզ կարդացեր առ ամենեսին՝ թէ չէ նա Կաթուղիկոս. մի օրհնեսցէ Միւռոն, մի ձեռնադրեսցէ եպիսկոպոս, և զիա՞րդ այժմ դու քեզն եկեալ ինձ աղաչաւոր՝ մաղթանս արկեր, եւ եռուր ինձ իբր Կաթուղիկոսի ձեռնադրել զդոստ եպիսկոպոս։ Եւ ես այժմ ձեռնհաս էի առնել ընդ քեզ՝ զոր ինչ դու ընդ իս կամիր առնել. բայց 'ի չնորհս պատուական եղբօր իմոյ Յակոբայ Կաթուղիկոսի ներեմ քեզ, միայն թէ մնասցես հաւատարիմ 'ի սէրդ. զայս լուեալ Մարտիրոսի՝ ամչեցաւ եւ սարսափ կալաւ զնա եւ լուռ եկաց։

Յետ այսորիկ զկնի աւուրց Պենտէկոստէի 'ի պատրաստիլ Եղիազարու դնալ 'ի Կոստանդինուպոլիս, հիւանդացաւ Յակոբ Կաթուղիկոս 'ի Թադաւորական քաղաքի անդ, և օր քան զօր տկարացեալ փոխեցաւ 'ի կենցաղոյս յերկրորդ աւուր ամսեանն Օգոստոսի (1680), 'ի հասակի 82 ամաց, կացեալ 'ի Կաթուղիկոսութեան ամս 25 և ամիսս 4։ Եւ տարեալ թաղեցին զմարմին նորա պատուով մեծաւ 'ի դերեզմանատեղին Հայոց 'ի Պէյ օղլու։ Իսկ Եղիազար հասեալ 'ի Կոստանդինուպոլիս, և տեսեալ թէ վախճանեալ է Յակոբ Կաթուղիկոս, կամ ըստ ասելոյ ոմանց՝ 'ի ճանապարհի լուեալ զմահ նորա, դարձաւ անդրէն փութանակի յԵրուսաղէմ, և յայնմ օրէ տիրաբար վարէր զԿաթողիկոսութիւն իւր 'ի վերայ Հայոց։

Իսկ միաբանք Էջմիածնի զկնի երկար խորհրդակցութեան, և հաճելոյ զմիտս Պարսիկ իշխանին Երեւանայ, և